ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի հոկտեմբերի 4-ի Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 88-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի՝

ա. առաջին նախադասության «11-րդ և 21-րդ» բառերը փոխարինել «3-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ» բառերով,

բ. երկրորդ նախադասությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն մասի աղյուսակի 1-ին, 2-րդ, 3-րդ, 10-րդ, 14-րդ և 15-րդ տողերով նախատեսված ծածկագրերին դասվող ապրանքների մասով իրականացվող գործարքների և գործառնությունների հարկման բազայի նկատմամբ ակցիզային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերով.»,

գ. աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

ՀՀ	Ապրանքի ծածկագիրը՝ ըստ ԱՏԳ ԱԱ-ի	Ապրանքախմբի անվանումը	Հարկման բազայի չափման միավորը	Ակցիզային հարկի դրույքաչափերը (դրամ)		
				2024 թվականի հունվարի 1-ից	2025 թվականի հունվարի 1-ից	2026 թվականի հունվարի 1-ից
1.	2207	էթիլային սպիրտ	1 լիտր (100 տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	6300	6900	7600
2.	2208 (բացառությամբ 2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	սպիրտային խմիչքներ	1 լիտր	3800	4200	4600

	2208 20 2208 30 2208 40)					
3.	2208 90 330 0 2208 90 380 0 2208 90 480 0	պտուղներից և (կամ) հատապտուղների ց պատրաստված օղի	1 լիտր	3800	4200	4600
4.	2208 20	կոնյակ, բրենդի և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր (100-տոկոսանոց սպիրտի վերահաշվարկով)	ա. 1-ից մինչև 3 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3300 բ. 4-ից մինչև 5 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 3800 գ. 6-ից մինչև 10 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 6500 դ. 11-ից մինչև 15 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 9300 ե. 16-ից մինչև 19 տարի, ներառյալ՝ հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 15300 զ. 20 և ավելի տարի հնացման ժամկետ ունեցող խմիչքի համար՝ 24000		
5.	2208 30 2208 40	վիսկի, ռոմ և այլ սպիրտային թուրմեր	1 լիտր	8000		
6.	2203 00	գարեջուր	1 լիտր	150		
7.	2204	խաղողի գինի	1 լիտր	165		
8.	2205	վերմուտ և խաղողի այլ գինիներ	1 լիտր	1100		
9.	2206 00	խմորման ենթարկված այլ ըմպելիքներ (խնձորի սիդր, պերրու (տանձի սիդր), մեղրաըմպելիք), պտղային, հատապտղային, մրգային և այլ գինիներ	1 լիտր	165		
10.	2402 (բացառությամբ 2402 10 000 01 2402 90 000 01	ծխախոտի արտադրանք	1000 հատ	16100	17700	19500

	2402 10 000 02 2402 90 000 02)					
11.	2402 10 000 01 2402 90 000 01	սիգար	1000 հատ	660000		
12.	2402 10 000 02 2402 90 000 02	սիգարելա	1000 հատ	18000		
13.	2403	ծխախոտի արդյունաբերական փոխարինիչներ	1 կգ	1640		
14.	2404 11 000 9	ծխախոտի արտադրանք	1000 հատ	3400	3750	4150
15.	2404 12 000 0 2404 19 000	ծխախոտի արտադրանք	1 միլիլիտր	65	80	100
16.	2710 19 710 0 - 2710 19 980 0 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0	քսայուղ	1 կգ	550		
17.	2710 12	բենզին	1 տոննա	43600		
18.	2710 (բացառությամբ 2710 12 2710 19 710 0 - 2710 19 980 0)	դիզելային վառելիք	1 տոննա	14200		
19.	2709 00	հում նավթ, նավթամթերքներ	1 տոննա	29450		
20.	2711 (բացառությամբ 2711 11 000 0 2711 21 000 0)	նավթային գազեր և գազանման այլ ածխաջրածիններ	1 տոննա	1100		
21.	2711 21 000 0	սեղմված բնական գազ	1 տոննա	37100		

2) 2-րդ մասի աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

	2024 թվականի հունվարի 1-ից	2025 թվականի հունվարի 1-ից	2026 թվականի հունվարի 1-ից
Ակցիզային հարկի հաշվարկման գործակից	1.08	1.16	1.24

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2024 թվականի հունվարի 1-ից:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-597-26.05.2023-ՏՀ-011/0, Կ-597[1]-26.05.2023-ՏՀ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

Հոդված 3.

<table>
<tr><th>№</th><th>Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը</th><th>Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը</th><th>Առաջարկություն (փոփոխություն, լրացում)</th><th>Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը</th><th>Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը</th></tr>
<tr><td>1</td><td>2</td><td>3</td><td>4</td><td>5</td><td>6</td></tr>
<tr><td>1.</td><td>Ազգային ժողովի պատգամավոր Արսեն Թորոսյան</td><td>Հոդված 1-ին,կետ 1-ին, ենթակետ «գ»</td><td>Նախագծով առաջարկվող աղյուսակ «գ.»-ում 10-րդ կետի 5-րդ սյունյակի «16100» թիվը փոխարինել «16800»-ով, 6-րդ սյունյակի «17700»-ը՝ «19300»-ով և 7-րդ սյունյակի «19500»-ը՝</td><td>Չի ընդունվել:
1. 2024-2026թթ. համար ծխախոտի արտադրանքի գծով առաջարկվող՝ ակցիզային հարկի 10 տոկոս դրույքաչափի բարձրացումը դրամական (բացարձակ) արտահայտությամբ միջինում ավելի մեծ է լինելու, քան նախորդ տարիների 15 տոկոս բարձրացումը (թվերը ներկայացված են ստորև): Սա պայմանավորված է նրանով, որ նախորդ տարիներին արդեն իսկ դրույքաչափի բարձրացումը ինտենսիվ է եղել:
<table>
<tr><th></th><th>2020</th><th>2021</th><th>2022</th><th>2023</th><th>2024</th><th>2025</th><th>2026</th></tr>
<tr><td>ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ, 1000 գլանակի հաշվով)</td><td>9,625</td><td>11,070</td><td>12,730</td><td>14,640</td><td>16,100</td><td>17,700</td><td>19,500</td></tr>
</table></td><td>Չի ընդունվել</td></tr>
</table>

			«22200»-ով	դրույքաչափի տարեկան աճը	1,255	1,445	1,660	1,910	1,460	1,600	1,800	
				դրույքաչափի միջին տարեկան աճը նախորդ 4 տարիներին և առաջիկա 3 տարիներին	1,568				1,620			
				Ավելին՝ 1) եթե հաշվի առնենք նաև այն, որ ակցիզային հարկը, այլ հավասար պայմաններում, ներառվում է գնի մեջ, իսկ ծխախոտի արտադրանքի մասով ԱԱՀ-ն հաշվարկվում է տուփի վրա մակնշված՝ առավելագույն մանրածախ գնից, ստացվում է, որ, ըստ էության, ակցիզային հարկը իր հերթին ներառվում է ԱԱՀ-ով հարկման բազայի մեջ: Այս դեպքում, դրույքաչափի միջին տարեկան աճը 2020-2023թթ. համար կկազմի ***1882 դրամ***, իսկ 2024-2026թթ. համար՝ ***1944 դրամ***, 2020-2023թթ. համար դրույքաչափի 15 տոկոս, և 2024-2026թթ. համար առաջարկվող՝ դրույքաչափի 10 տոկոս կուտակային աճը, ըստ էության, հավասար է **միջին տարեկան 19 տոկոս աճի**, քանի որ յուրաքանչյուր տարի աճը կատարվում է նախորդ տարիներին արդեն իսկ բարձրացված դրույքաչափի վրա (իսկ եթե հաշվի առնենք նաև ԱԱՀ-ն, ապա՝ ***23 տոկոս***):								
				2. ԵԱՏՄ-ի՝ ակցիզային հարկի դրույքաչափերի ներդաշնակեցման համաձայնագրի համաձայն՝ ՀՀ-ն 2024թ. համար պարտավորություն էր ստանձնել հասնել 1000 գլանակի հաշվով 28 եվրոյին համարժեք ակցիզային հարկի դրույքաչափի: Դեռևս մեկ տարի առաջ՝ 2023թ., մեր դրույքաչափը համարժեք է ***35* եվրոյի**, իսկ 2026թ. համար ներկա փոխարժեքով և ըստ ներկայացված առաջարկության՝ կկազմի շուրջ ***47 եվրո*** (իհարկե, սրան նպաստել է նաև ՀՀ դրամի արժևորումը): Մեր գնահատմամբ, համադրելի երկրների հետ համեմատությամբ սա բավական լավ ցուցանիշ է (համադրելիությունը կատարվում է մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ-ի ցուցանիշի հիման վրա): Աղյուսակը ներկայացված է ստորև.								

Երկիրը	Ակցիզային հարկի դրույքաչափը (դրամ, 2023թ.)	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ (ԱՄՆ դոլար, ընթացիկ գներով)	Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի գործակիցը ՀՀ նկատմամբ	Ակցիզային հարկի համադրելի դրույքաչափը
ՀՀ	14,640	6,584	1	14,640
ՌԴ	21,216	15,444	2.3	9,045
Ղազախստան	12,690	11,440	1.7	7,303
Բելառուս	23,063	7,860	1.2	19,319
Ղրղզստան	11,525	1,626	0.2	46,667
Ադրբեջան	8,126	6,826	1	7,838
Վրաստան	12,612	6,671	1	12,448
Թուրքիա	31,608	10,618	1.6	19,600

Հատկանշական է նաև այն, որ վերևում կան երկրներ (օրինակ՝ Վրաստանը), որ առաջիկա տարիներին ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափի բարձրացում չեն պլանավորում:

3. Ծխախոտի հարկի, գնի և սպառման ծավալների վերաբերյալ իհարկե բազմաթիվ հետազոտություններ կան՝ տարբեր եզրահանգումներով: Այս առումով, շատ հետազոտություններ էլ հանգում են այն եզրակացությանը, որ ծխախոտի սպառման ծավալների վրա հարկի կամ գնի ազդեցությունը աննշան է՝ հատկապես աշխատունակ ու վճարունակ տարիքի (25-45 տարեկան) սպառողների պարագայում: Ավելին, կան հետազոտություններ, որոնցով հիմնավորվում է, որ ծխախոտի սպառման ծավալների վրա ավելի մեծ ազդեցություն ունի, օրինակ, սպառողի կրթական ցենզը (որքան բարձր՝ այնքան ծխելու հակվածությունը՝ ցածր), հասարակության շրջանում իրականացվող քարոզչությունը, օրվա ընթացքում սպառողի զբաղվածությունը, սպորտով զբաղվելու հասանելիությունը և այլն, քան գինը ընդհանրապես:

				4. Տեղական արտադրության միջին գին ունեցող ծխախոտի արտադրանքի գնի կառուցվածքում 2023թ. ակցիզային հարկի կշիռը կազմում է շուրջ 50 տոկոս, ԱԱՀ-ի հետ միասին՝ շուրջ 67 տոկոս: Մեր առաջարկության համաձայն՝ 2026թ. այդ ցուցանիշները կլինեն՝ համապատասխանաբար 54 տոկոս և 71 տոկոս: Այլ կերպ ասած՝ ծխախոտի արտադրանքի ***գնի ավելի քան 2/3 մասը կազմում են միայն սպառման հարկերը***:	
				5. Ծխախոտի արտադրանքի ակցիզային հարկի դրույքաչափերի՝ կտրուկ և ավելի մեծ չափերով բարձրացումը ռիսկեր է պարունակում, քանի որ 1) կախվածություն ունեցող սպառողը կարող է անցնել ավելի ցածրարժեք ծխախոտի սպառման, որը ենթադրվում է, որ այլ հավասար պայմաններում, ավելի ցածր որակ ունի և ավելի շատ է վնասում առողջությանը: Բացի այդ, ***պետական բյուջեն սկսում է ԱԱՀ-ի գումարներ կորցնել***, քանի որ ավելի ցածրարժեք ծխախոտի սպառումից ավելի քիչ ԱԱՀ է վճարվում պետական բյուջե, 2) ձևավորվում են ***մաքսանենգ ճանապարհով և կեղծված ապրանքներ ներմուծելու ռիսկեր***, 3) տեղական արտադրության արտահանումը փոխարժեքի պատճառով տուժում է, և ակցիզային հարկի ավելի բարձր բեռը կարող է խնդիրներ ստեղծել նաև տեղական արտադրության ներքին սպառման համար: Հատկանշական է նաև այն, որ ոլորտի ընկերությունները տարեկան վճարում են շուրջ ***120 մլրդ. դրամ հարկեր***, ուստի ոլորտի մասով իրականացվող հարկային քաղաքականության մասով գործողությունները պետք է հավասարակշռված լինեն, որպեսզի շոկեր չձևավորվեն:	
2.	Ազգային ժողովի պատ-գամավոր Արսեն Թորոսյան	**Հոդված 1-ին, կետ 1-ին, ենթակետ «գ»**	Նախագծով առաջարկվող աղյուսակ «գ.»-ում 14-րդ կետը խմբագրել հետևյալ կերպ 5-րդ սյունյակի «3400» թիվը փոխարինել «5600»-ով, 6-	**Չի ընդունվել:** 1. Տաքացվող տեխնոլոգիայով սպառվող (IQOS) ծխախոտի արտադրանքի համար էականորեն ավելի ցածր դրույքաչափ կիրառելը պայմանավորված է հետևյալ հիմնական հանգամանքներով. 1) մինչև այժմ հետազոտությունների արդյունքները միանշանակ ձևով չեն հանգում նրան, որ IQOS-ը նույնքան վտանգավոր է առողջության համար, որքան ավանդական ծխախոտը: Օրինակ, Մեծ Բրիտանիայում նույնպես IQOS-ի համար սահմանված է էականորեն ավելի ցածր ակցիզային հարկ, և այդ կերպ կառավարությունը կախվածություն ունեցող սպառողների շրջանում խրախուսում է IQOS-ի սպառումը, այդ թվում՝ քարոզչությամբ (եթե սպառողները չեն կարողանում թողնել ծխելը, խրախուսվում է IQOS-ի օգտագործումը), 2) IQOS-ի օգտագործումը կատարվում է համապատասխան	**Չի ընդունվել**

			րդ սյունյակի «3750»-ը՝ «10100»-ով և 7-րդ սյունյակի «4150»-ը՝ «18200»-ով:	էլեկտրոնային ***սարքերի միջոցով***, որոնց ներմուծման համար նույնպես վճարվում են հարկեր և մաքսային վճարներ, և այս հանգամանքը նույնպես հաշվի է առնվել: Վերոգրյալով պայմանավորված կարծում ենք առավել նպատակահարմար է հետագայում քննարկել էլեկտրական սարքավորումների հարկման մոտեցումները վերանայելու նպատակահարմարության հարցը:	